



№ 1/02-1/12310

«05» «09» 2019թ.

Վարչապետի աշխատակազմի ղեկավար  
պարոն Է. Աղաջանյանին

Հարգելի պարոն Աղաջանյան

Ի կատարումն վարչապետի 2019 թվականի օգոստոսի 21-ի N02/12.4/38786 հանձնարարականի և ի պատասխան հանրության կողմից ստացված տեղեկությունների՝ կապված «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման աշխատանքների նոր շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացման անհրաժեշտության հետ, հայտնում եմ, որ Elard և TRC ընկերությունների անկախ փորձաքննության արդյունքները՝ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով, ներկայացվել են Գիտությունների ազգային ակադեմիա (որը համաձայն 2011 թվականի ապրիլի 4-ի «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՕ-135-Ն օրենքի՝ գիտական գործունեության գծով կառավարության պաշտոնական խորհրդատուն է) և պետական կառավարման լիազոր մարմիններին: Շրջակա միջավայրի նախարարության կողմից ուսումնասիրվել են նաև «Լիդիան Արմենիա» ՓԲԸ, Lydian International Ltd., Golder Associates, Global Resource Engineering ընկերությունների պաշտոնական կայքերում տեղադրված նյութերը:

Ստորև ներկայացնում եմ պետական կառավարման լիազոր մարմինների և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Elard ու TRC ընկերությունների դիրքորոշումը «Լիդիան Արմենիա» ՓԲԸ փաստաթղթերի (այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության) վերաբերյալ:

- 1) Թթվային ապարների դրենաժի կառավարման պլանում ջրի որակի մոդելավորման ընթացքում դիտարկվել են մոդելավորված երկաթի բնական վիճակից ավելի ցածր կոնցենտրացիաներ՝ 0.000000566մգ/լ, այն դեպքում, որ Ամուլսարի ստորգետնյա և մակերևութային ջրերում և անձրևաջրերում այդ ցուցանիշը տատանվում է 0.001-300մգ/լ:
- 2) Պասիվ մաքրման համակարգի նախագծման համար օգտագործված ջրի որակի մոդելավորման 2015 թվականի կանխատեսումներում այլումինի կոնցենտրացիան հաշվարկվել է 2.27մգ/լ, իսկ 2017 թվականին այն վերանայվել է և հաշվարկվել է 27.2մգ/լ:
- 3) ՇՄԱԳ հաշվետվության 166-րդ էջի «Ամփոփում» բաժնում նշվում է, որ «Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի տարածքը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ տարեկան գոլորշիացման ցուցանիշը գերազանցում է տեղումների քանակին»: Սակայն հայցվող տարածքում գոլորշիացման ցուցանիշը «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը գնահատել է միայն Որոտանի դիտակայանի տվյալներով: Ընդ որում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության կլիմայական բնութագրերի ելակետային տվյալներում և ստորերկրյա ջրերի համալրման հաշվարկում ներկայացված են





- 6) Ըստ ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվածի՝ Ամուլսարի գագաթին քամու առավելագույն արագությունը գրանցվել է 15մ/վրկ: Սակայն դիտարկումների արդյունքներով, Որոտանի լեռնանցքում, Ամուլսարի ստորոտում գրանցվում են մինչև 40մ/վրկ քամիներ:
- 7) Հաշվետվությունում նշվում է, որ Կեչուտի ջրամբարից Սևանա լիճ տեղափոխվող ջրի քանակի վերաբերյալ տվյալներ չեն հայտնաբերվել, ինչը ճիշտ չէ. Արփա-Սևան ջրատարի վրա 1968 թվականից առ այսօր գործում է ԱԻՆ հիդրոմետ ծառայության «Ծովինար» ջրաչափական դիտակետը (աշխ. կոորդինատներ՝ 40.156265° և 45.494668°):
- 8) Հաշվետվությամբ ամրագրված է, որ «Արփա և Դարբ գետերի հոսքի պատմական տվյալներ հասանելի չեն, իսկ ծրագրի հարևանությամբ Արփա գետի վրա Կեչուտի ջրամբարից վերև ջրաչափական կայաններ չեն հայտնաբերվել»: Արփա գետի վրա Կեչուտի ջրամբարից 4.0կմ հոսանքով վերև 1957 թվականից առ այսօր գործում է ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի Արփա-Ջերմուկ հիդրոլոգիական դիտակետը (աշխ. կոորդինատներ՝ 39.837815° և 45.676694°):
- 9) Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի տվյալների, 2015-2018թթ.-ի կտրվածքով Ջերմուկի և Որոտանի լեռնանցք օդերևութաբանական կայաններում գրանցվել է դիտված վտանգավոր օդերևութաբանական երևույթների ավելացում:
- 10) Քանի որ ծրագրի տարածքն աչքի է ընկնում հորդառատ անձրևներով, հետևաբար անհրաժեշտ է հաշվարկել հանքի տարածքից ձևավորվող՝ Կեչուտի ջրամբար թափվող «Պուճուր գետ» գետակի վտակի 0.1% ապահովվածության առավելագույն ելքերը: Այդ անանուն վտակը սկիզբ է առնում դատարկ ապարների լցակույտի տարածքից և վարարման ընթացքում կարող է հանգեցնել ընդերքօգտագործման թափոններով Կեչուտի ջրամբարի աղտոտման:
- 11) Սեյսմիկ վտանգի գնահատման իրականացման ժամանակ չեն օգտագործվել գործիքային ժամակահատվածի համար երկրաշարժերի տեղական կատալոգները:
- 12) Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2016 թվականի ապրիլի 26-ին հանքավայրի հանքարդյունահանման համալիրի փոփոխված նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ԲՓ-35 դրական փորձաքննական եզրակացությունն ստանալուց հետո ընկերությունն իրականացրել է մի շարք լրացուցիչ հետազոտություններ և կազմել համապատասխան զեկույցներ, հաշվետվություններ: Դրանցում ներկայացվել են տվյալներ, տեխնիկական լուծումներ, որոնք ներառված չէին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատական ստացած նախագծի և հաշվետվության մեջ: Մասնավորապես.
- վերանայվել է հանքավայրի տարածքին բնորոշ գոլորշիացման ցուցանիշները,
  - լրամշակվել է բացահանքի և դատարկ ապարների լցակույտի տարածքների ջրային հաշվեկշիռը,
  - պասիվ մաքրման համակարգի աերոբ մաքրման խոնավ տարածքը փոխարինվել է անթթվածին կրաքարային դրենաժով:
- «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման 2016 թվականին կազմված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում չեն ներառվել նորացված տվյալներ, չեն դիտարկվել դրանց հետ կապված լուծումներ:
- 13) Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի՝ ներկայացված փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքում հանգել են հետևյալ եզրահանգումների. Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների

հանքավայրի ՇՄԱԳ հաշվետվության 2.9-րդ «Ռադիացիոն ֆոն» բաժինը պետք է ամբողջությամբ վերանայվի, հաշվի առնելով 1952-54թթ.-ին Անուսարի տարածքում կատարված ուրանի հետախուզական աշխատանքների հաշվետվությունը: Եթե հանքանյութի ակտիվությունը գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված արժեքը, դրա կառավարումը պետք է իրականացվի համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 439-Ն որոշման պահանջների:

Հիմք ընդունելով վերը նշվածը և ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 1-2-րդ կետերով և ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 22-ի N428-Ն որոշման պահանջներով՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին իրականացնել ստուգումներ:

Հարգանքով՝

Է. Գրիգորյան

9/5/2019

X 

Signed by: GRIGORYAN ERIK 2710790092

ԸՀՊՔՎ, Ա. Աղաբեկյան, 011818528  
ՋՌԿԳ, Է. Փիրոմյան, 011 011818548  
ՇՄԱԳԿ ՊՈԱԿ, Ա. Դոնոյան, 011 220218  
ԻՎ, Խ. Խաչատրյան, 011818536  
ՇՄՄՏ ՊՈԱԿ, Գ. Շահնազարյան, 010272007  
Վ. Անանյան, 011818502